ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատաշուկայի Վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 3.4. Ուսուցողական այց

Ուսուցողական այց Դանիայի վիճակագրություն

2016թ. սեպտեմբերի 20-23

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական
ծառայություն

STATISTICS
DENMARK

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 3
2. Քաղած դասեր 3
3. Եզրակացություններ և առաջարկություններ 6
Հավելված 1. Ծրագիր 7
Հավելված 2: Հանդիպումների մասնակիցներ 8

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի 3-րդ բաղադրիչի 3.4 գործողության շրջանակներում:

Ուսուցողական այցի նպատակն էր դանիական փորձի հիման վրա աշխատանքի շուկայի վիճակագրության ոլորտում ձեռք բերել գործնական գիտելիքներ և նկարագրել, թե ինչպես կարելի է այդ գիտելիքն օգտագործվել ՀՀ ԱՎԾ-ում:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցներն իրենց երախտիքն են արտահայտում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին իրենց աջակցության և Դանիայում ստացված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես օգտակար է եղել աշխատանքի համար:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Քաղած դասեր

Ուսուցողական այցի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Համառոտ ակնարկ Դանիայի վիճակագրության (ԴՎ) մասին.
- Աշխատավարձի և վաստակի վիճակագրության նպատակը և բիզնես-գործընթացը.
- Վաստակի կառուցվածքի հետազոտություն (ՎԿՀ). դանիական փորձ, ԵՄ կանոնակարգերից դեպի Եվրոստատի ՎԿՀ.
- Աշխատանքի գնի ինդեքսի (ԱԳԻ) վիճակագրության նպատակը, ցուցանիշի հաշվարկման բիզնես-գործընթացը, հիմնական շահառուները.
- Հայաստանում ՎԿ փորձնական հետազոտության ընթացքի և առաջիկա գործողությունների քննարկում.
- Աշխատուժի հետազոտություն. ազգային փորձ և Եվրոստատի թեմատիկ մոդուլներ.
- Թափուր աշխատատեղերի վիճակագրություն. հետազոտության նպատակը և բիզնես-գործընթացը:

ԴՎ փորձագետների բոլոր ներկայացումներում առանձնահատուկ կարևորությամբ շեշտադրվել են վիճակագրական արտադրանքի որակի կառավարման հիմնահարցերը:

Ուսուցողական այցի առաջին օրը՝ սեպտեմբերի 20-ին, Դանիայի վիճակագրության միջազգային գծով խորհրդատվության բաժնի աշխատակից տիկին Սիլյա Էմմելը հանդես եկավ ողջույնի խոսքով և ամփոփ տեղեկատվությամբ ներկայացրեց ԴՎ ստեղծման, իրավական և գործառնական առումով բեկումնային համարվող իրադարձությունների ժամանակագրությունը, ԴՎ կազմակերպական կառուցվածքը (այդ թվում նաև՝ աշխատանքի վիճակագրությամբ զբաղվող ստորաբաժանումները), կառավարման համակարգը և նրա հիերարխիկ մակարդակները, առաքելությունը, 2016-2020թթ. ռազմավարությունը, որը միտված է հանրության թիրախային սպառողների և ռեսպոնդենտների հիմնական կարիքների ուսումնասիրությանը և դրանց բավարարմանը: Տիկին Էմմելի կողմից ներկայացվեց նաև ԴՎ տեսլականը, հիմնական մարտահրավերները, տվյալների հավաքագրման և տարածման ռազմավարությունը:

Հաջորդիվ՝ ԴՎ աշխատավարձի վիճակագրության գծով փորձագետ տիկին Մարիա Բոյեն ներկայացրեց այցելության ծրագիրը, ծանոթացրեց աշխատավարձի վիճակագրությամբ զբաղվող աշխատակիցներին:

Աշխատավարձի և վաստակի վիճակագրության տվյալների աղբյուրների, տվյալների հավաքագրման եղանակների վերաբերյալ շնորհանդեսները ներկայացվեցին Մ. Բոյեյի և Ա.Ե

փորձագետ Հեգե Սյուզան Հաուգլանդի կողմից: Մասնավորապես, ԴՎ օրինակով ներկայացվեց աշխատավարձի և վաստակի վիճակագրության բիզնես-գործընթացը՝ սկզբնական տվյալների հավաքագրումից մինչև տվյալների տարածման փուլ: Ներկայացվեց երկրում գործող վճարման տարբեր համակարգերից աշխատավարձի, վաստակի վիճակագրության համար անհրաժեշտ տվյալների փոխանցման, ինտեգրման, տվյալների նախնական «թեստավորման», բաց թողնված արժեքների (missing values) կամ ոչ ճիշտ լրացված կամ «ծայրահեղ արժեքների» (outliers / extreme values), տվյալների «հեռացման» կամ ինքնաշխատ համակարգով տվյալների ճշգրտման, վերականգնման գործընթացը, անվանական տվյալների գաղտնազերծման ընթացակարգը:

Փորձագետները հանգամանալից ներկայացրեցին.

- Վաստակի կառուցվածքի հետազոտության (ՎԿՀ) կամ՝ աշխատանքի վարձատրության սատելիտային վիճակագրության մեթոդաբանությունը՝ հիմնված ԵՀ և ԵԽ կանոնակարգերի վրա և կիրառվող դասակարգիչները.
- ՎԿՀ անհրաժեշտ տվյալների նվազագույն և ընդլայնված հավաքածուն.
- հետազոտության ընտրանքի հետ կապված որոշ առանցքային հարցեր:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերին 21-ին, ՎԿՀ հետ կապված հարցերի ներկայացումը շարունակվեց տիկին Հաուգլանդի կողմից, որի շրջանակը ներառում էր հետևյալ հարցերը.

- Ազգային տվյալների և Եվրոստատի ՎԿՀ տարբերությունները, ազգային տվյալներից դեպի Եվրոստատի ՎԿՀ անցման գործընթացը.
- Կանոնակարգով նախատեսված՝ Եվրոստատին ներկայացվող Որակի հաշվետվությունները՝ կիրառված մեթոդաբանության նկարագրությամբ և տվյալների արժանահավատությունը հավաստող տվյալներով.
- գործընթացի տարբեր փուլերում ծագող խնդիրները և լուծման տարբերակները:

Հաջորդ թեման, որ ներկայացվեց ԴՎ աշխատակիցների կողմից, վերաբերում էր աշխատուժի հետազոտության դանիական փորձին, որը, դուրս լինելով սույն Ծրագրի 3-րդ բաղադրիչ շրջանակից, ՀՀ ԱՎԾ մասնագետների խնդրանքով ներառվել էր ուսուցողական այցի օրակարգում:

Թեմայի շրջանակում ԴՎ աշխատակիցները ներկայացրեցին ԱՀ ազգային փորձը՝ անդրադառնալով հետազոտության հետ կապված հետևյալ հարցերին.

- դաշտային աշխատանքներում ներգրավված անձնակազմ, տվյալների հավաքագրման մեթոդ, պարբերականություն, տվյալների գաղտնիության ընթացակարգ.
- ընտրանքի մեթոդաբանություն՝ ընտրանքային միավոր, ընդգրկվածություն, ընտրանքի մեթոդ, ընտրանքի չափ, ռոտացիոն սխեմա և այլն.
- տվյալների մշակում՝ ինքնաշխատ համակարգով տվյալների նախնական ստուգում, սխալների ֆիլտրում, բաց թողնված տվյալների վերականգնում, կոդավորում, Եվրոստատի կողմից տվյալների ստուգում և այլն.
- Եվրոստատի համակարգմամբ իրականացվող ամենամյա մոդուլ-հետազոտություններ՝ թեմատիկ բազմազանությամբ.
- Եվրոստատին ԱՀ տվյալների փոխանցման ընթացակարգ.
- տվյալների տարածման և շահառուների հետ համագործակցության ռազմավարություն, հետազոտության արդյունքների նկատմամբ մշտապես աճող պահանջարկ:

Նույն օրը ԴՎ միջազգային գծով խորհրդատվության բաժնի ավագ խորհրդատու Շարլոտե Յուլ Հանսենի և Մարիա Բոյեյի ուղեկցությամբ Հայաստանի պատվիրակությունը պատիվ ունեցավ հանդիպելու ԴՎ տնօրեն պարոն Յորգեն Էլմեսկովի հետ: Ճեպազրույցի ընթացքում երկուստեք (Հայաստանյան պատվիրակության կողմից՝ ի դեմս ՀՀ պատվիրակության ղեկավար և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գ. Գևորգյանի)

բարձր գնահատվեց Թվինինգ ծրագրի շրջանակում ԴՎ և ՀՀ ԱՎԾ համագործակցությունը՝ Ծրագրին մաղթելով հաջողություն և շարունակականություն:

Աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԱՎԾ պատվիրակությանը ողջունեց և այցելության ծրագրով նախատեսված թեմաների ընդհանուր ակնարկով հանդես եկավ նաև Աշխատավարձի, վաստակի վիճակագրության ոլորտը համակարգող, ԴՎ Անհատական ֆինանսների և բարեկեցության (Personal Finances and **Welfare**) բաժնի պետ պարոն Սթին Պեդերսենը:

Ուսուցողական այցի երրորդ օրը՝ սեպտեմբերի 22-ին, ՀՀ ԱՎԾ մասնակիցներն անդրադարձան քննարկված թեմաների ՀՀ ԱՎԾ փորձին և հատկապես՝ առաջիկայում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվելիք ՎԿ փորձնական հետազոտության հետ կապված հարցերին: ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը հանգամանալից ներկայացրեց խնդրո առարկա հետազոտության իրականացման ուղղությամբ կատարված քայլերը, ընթացիկ իրավիճակը և նախատեսված գործողությունները՝ հաշվի առնելով հետազոտության բարդությունը, ժամանակի և ռեսուրսների սղությունը: Մասնավորապես, տեղեկացվեց, որ ՀՀ Պետեկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից ստացվել է հերթական մերժումը՝ վերջիններիս կողմից տնօրինվող վարձու աշխատողների անձնավորված տվյալների բազան վիճակագրական նպատակով օգտագործելու ՀՀ ԱՎԾ հայցը, ինչը ենթադրում է անհարժեշտ տվյալների հավաքագրման նոր ռազմավարություն՝ շարունակելով բանակցությունները ՀՀ ՊԵԿ-ի հետ: Տեղեկացվեց նաև, որ մշակվել է ՎԿ փորձնական հետազոտության հարցաթերթի նախնական տարբերակը: Նշվեց, որ տվյալների հավաքագրումը նախատեսված է իրականացնել ֆինանսական և ժամանակային ռեսուրսների ծախսարդյունավետ՝ էլեկտրոնային եղանակով՝ հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները տեղադրելով ՀՀ ԱՎԾ կայքէջում: Լ. Քալանթարյանը ներկայացրեց նաև փորձնական հետազոտության գործընթացի հետ կապված այլ մանրամասներ՝ ընտրանք, ընտրանքի չափ, կազմակերպությունների և գործունեության տեսակների ընդգրկվածություն, տվյալների մշակում և այլն: Ներկայացումն ուղեկցվեց հարց ու պատասխանով: Կարևորվեցին ուսուցողական այցի շրջանակում թեմայի հետ կապված բոլոր քննարկումները և առաջարկությունները, ինչը կնպաստի մշակելու փորձնական հետազոտության գործունակ գործիքակազմ՝ Հայաստանում ՎԿՀ գիտելիքահեն բազա ստեղծելու համար:

Հաջորդ թեման՝ կապված Թափուր աշխատատեղերի հետազոտության հետ, ներկայացրեց ԴՎ թափուր աշխատատեղերի վիճակագրության բաժնի պետ պարոն Սվեն Էգմոսը՝ անդրադառնալով հետևյալ հարցերին.

- թափուր աշխատատեղերի հետազոտության նպատակ, արդիականություն,
- ընտրանքի մեթոդաբանություն.
- տվյալների հավաքագրման եղանակ, պարբերականություն,
- կազմակերպությունների ընդգրկվածություն, սահմանափակումներ,
- տվյալների սեզոնային ճշգրտումներ.
- տվյալների մշակման և տվյալների տարածման ռազմավարություն:

Աշխատանքի շուկայում առաջարկ-պահանջարկի անհամապատասխանության գնահատման տեսանկյունից առանձնակի կարևորվեց թափուր աշխատատեղերի հետազոտության դերն, ներկայացվեց հետճգնաժամային ժամանակահատվածում ցուցանիշի աճի դինամիկան:

Ուսուցողական այցի վերջին օրը՝ սեպտեմբերի 23-ին, Աշխատանքի գնի ինդեքսի մշակման մեթոդաբանության ներկայացմամբ հանդես եկավ պարոն Ուվե Պեդերսենը, ով հանգամանալից ներկայացրեց.

- ԱԳԻ վիճակագրության նպատակը՝ ԱԳԻ-ն որպես աշխատանքի շուկայի վիճակագրության Եվրոպական տնտեսության սկզբունքային ցուցանիշ (PEEI) և հիմնական սպառողները.
- աշխատավարձի ինդեքսի ցուցանիշը (IAE) որպես ԱԳԻ հաշվարկման հիմք.
- աշխատավարձի ինդեքսի ցուցանիշի համեմատությամբ ԱԳԻ թույլ և ուժեղ կողմերը.
- կիրառվող ծրագրային փաթեթները՝ SAS՝ աշխատավարձի և աշխատանքի գնի այլ ծախսերի տվյալների մշակման համար, Excel՝ ԱԳԻ հաշվարկման և Demetra՝ եռամսյակային ցուցանիշների շարքում սեզոնային ճշգրտումների համար.
- ԱԳԻ հաշվարկման մեթոդաբանությունը և բիզնես-գործընթացը, ԱԳԻ մշակման սատելիտային համակարգը.
- ազգային տվյալների համապատասխանեցումը ԵՄ ստանդարտներին:

Ուսուցողական այցի ընթացքում ներկայացված բոլոր ելույթներն ուղեկցվել են թեմային առնչվող և հարակից հարց ու պատասխաններով, երկու երկրների մոտեցումների համեմատություններով, լրացուցիչ պարզաբանումներով և մեկնաբանություններով:

Ուսուցողական այցի ավարտին ԴՎ կողմից ամփոփիչ ելույթով հանդես եկավ Մարիա Բոյեն, ով ներկայացրեց այցելության արդյունքները, միաժամանակ անդրադառնալով իրականացվելիք առաջիկա և հետագա միջոցառումներին: Մասնավորապես, պայմանավորվածություն ձեռք բերվեց ՀՀ ԱՎԾ ՎԿ փորձնական հետազոտության ժամանակացույցի և հարցաթերթի նախագծերն ուղարկել փորձագետներին՝ մինչ փորձագիտական խմբի հաջորդ առաքելությունը:

ՀՀ ԱՎԾ պատվիրակության կողմից եզրափակիչ ելույթով հանդես ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ պարոն Գ. Գևորգյանն, ով բարձր գնահատեց ուսուցողական այցը մասնագիտական և թե կազմակերպչական առումներով հավուր պատշաճի կազմակերպելու ԴՎ ներկայացուցիչների ջանքերը:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Հանդիպմանը Հայաստանի վիճակագիրների մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու Դանիայի վիճակագրական ծառայության աշխատանքի վիճակագրության լավագույն փորձին, տեղեկանալ ոլորտի վերջին զարգացումներին, քննարկելու ՀՀ ԱՎԾ պրակտիկայում Վաստակի կառուցվածքի հետազոտության, Աշխատանքի գնի ինդեքսի հաշվարկման և դրանց հետ կապված ստանդարտների ներդրման հարցերը, մարտահրավերները և այն գործողությունները, որոնք կնպաստեն ՀՀ աշխատանքի վիճակագրության շարունակական կատարելագործմանը: Ուսուցողական այցի ընթացքում դանիացի փորձագետների բոլոր շնորհանդեսները ուսուցողական էին և շատ հետաքրքիր: Ուսանելի էր նաև վարչական ռեգիստրների լայնամասշտաբ կիրառման, տվյալների որակի կառավարման Դանիայի վիճակագրության փորձը: Ուսուցողական այցը հաջողված էր և շատ արդյունավետ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում:

Հավելված 1. Ծրագիր

	Երեքշաբթի, սեպտեմբերի 20	*Վայր. Bergsøe2*
10.00 - 10.30	Ողջույնի խոսք և ծանոթություն Դանիայի վիճակագրությանը	Շարլոտե Յուլ Հանսեն
10.30 – 11.30	Շաբաթվա ծրագրի քննարկում և վաստակի աշխատակիցների ներկայացում	Սթին Բ. Պեդերսեն, Մարիա Բոյե
11.30 – 12.30	Ճաշ	
12.30 – 14.10	Տվյալների հավաքագրման ներկայացում	Մարիա Բոյե
14.10 – 14.20	Ընդմիջում	
14.20 – 15.30	Վաստակների կառուցվածքի հետազոտություն	Հեգե Հաուգլունդ, Մարիա Բոյե
	Չորեքշաբթի, սեպտեմբերի 21	*Վայր. Bergsøe2*
10.00 - 11.30	Աշխատանքի գնի հետազոտություն	Հեգե Հաուգլունդ, Մարիա Բոյե
11.30 – 12.30	Ճաշ	
12.30 – 14.10	Աշխատանքի գնի ինդեքս	Մարիա Բոյե
14.10 – 14.20	Ընդմիջում	
14.20 – 15.30	Աշխատանքի գնի ինդեքս	Ուվե Պեդերսեն
	Հինգշաբթի, սեպտեմբերի 22	*Վայր. Bergsøe2*
10.00 - 11.00	Փորձնական ուսումնասիրության քննարկում	ՀՀ ԱՎԾ
11.00 – 12.00	Ուղենիշների քննարկում	ՀՀ ԱՎԾ
12.00 – 13.00	Ճաշ	
13:00 – 14:10	Ուղենիշների քննարկում	ՀՀ ԱՎԾ
14.10 – 14.20	Ընդմիջում	
14.20 – 15.00	Եզրակացություն և գնահատում	Սթին Բ. Պեդերսեն, Սթին Բ. Պեդերսեն, Մարիա Բոյե
15.00 – 15.30	Աշխատանք շահառուների հետ	Մարիա Բոյե
	Ուրբաթ, սեպտեմբերի 23	*Վայր. Bergsøe2*
10.00 - 11.00	Աշխատուժի հետազոտություն	Սվեն Իմոուսը
11.00-11.30	Թափուր աշխատատեղեր	Սվեն Իմոուսը
11.30 – 12.30	Ճաշ	
12.30 –	Այցելություն Կոպենհագենի տեսարժան վայրեր, այդ թվում՝ Տիվոլի	

Հավելված 2: Հանդիպումների մասնակիցներ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ԱՎԾ)
Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Լուսինե Քալանթարյան, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ
Ջեմմա Ավոյան, աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
Սուսաննա Հունանյան, աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ

ԹՄԽ գրասենյակ
Լիանա Աթոյան, թարգմանիչ

Դանիայի վիճակագրություն
Սթին Բ. Պեդերսեն, բաժնի պետ
Մարիա Բոյե, ավագ խորհրդական
Հեգե Հաուգլունդ, բաժնի պետ
Ուվե Պեդերսեն, ավագ խորհրդական
Սվեն Իմոուսը, բաժնի պետ
Շարլոտե Յուլ Հանսեն, ավագ խորհրդական